

ՄԷՐ ՄԱՅԻՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԹԵՄԱ

Իշ պու Մէճմուայը Հաճախի, բաղար, եօրթու վէ ճուճա կիւնդիւնտէն մատա պու գըրթատա եւ վիճիւն նէշը օրուճաճա արը, Սէնէլլիլի բէշին օլարազ 200, Ալթը ալըճը 110, Իւշ ալըճը 60 զրշ: վէ թանէսի 1 զրշ: Տաշարայր իշին պէհէր նուճրօտուտ րօսթա իւճըթիլի ալընաճաղը խասթթէն պէյան օլուճուր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԴՐՈՒՄՆԵՐԸ

Իյանաթըն պէհէր օրրաւը պիր տէֆա-լը 3, Իբի տէֆա իշին 2, Իւշ տէֆա իշին 1 1/2 զուրուշ, Իւշ տէֆաւան զիյատէ օլան, վէ զալէթ ուզուճ իյանաթ իշին այ-րըճա բաղարըզ օլուճուր: Տաշարայրաւ կէլէն մէքթու պ վէ իյանաթըն րօսթա մէսարիֆէրի, կէստէրէնդէրին իւզէրինէ օլուճուր պէյան օլուճուր:

ՈՒՄԱՐՈՒՄ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ, ՊԵԼԷՏԻՅԷ, ՎԷ ԻԼՄԻՅԷ

ՎԷ ՄԷՎԵՏԸ ՆԱԳԻՐԱՅԸ ՄԱՅԻՆԻՅԷ ՄԻՐԹԱՆԻՑ ԳԱՋԷՐԸ

ԱՍԻՐԱՆԷ 2 ՅՈՒՆԻՍ

Թարաթըրըզա վարիտ օլան մէք-թու պ արը:

ՏՐԱՊԻԶՈՐՆ ԿԱՌԱՐԱԿԱՆ ՀԱՅՈՑ
ՊԱՏԱՍԻՆԱՐ ՀԱՍՈՒՆԵԱՆՑ ՄԷԿ
ՅՈՒՆԻՍԻՆՑԵ

Սէտայի Հազըգէթ լրագրոյն 1873 26 ապրիլ, 371 թիւ թերթին մէջ Գու-րիլէնէն առնուած յօդուած մը տեսնուեցաւ այս վերնագրով «Թրապիզոնտա պուլուճան Գալթիլի միլիթիլի» ապրիլ 25:

Այս վերնագիրը կը յայտնէ որ այն յօդուածը Տրապիզոնի Հաստատեան ժողովուրդը հրատարակեր է. որ բոլորովին ստույգ է և զրպարտութիւն կը պարունակէ. Եթէ առանձին անձէ մը հրատարակած ըլլար, և ոչնչանալ կուտեան արժանի կը դատուէր, սակայն ըստ յօդուածոյն Եպիսկոպոս, և հինգ քահանայ ունեցող 767 թիւ ժողովուրդ մը կը հրատարակէ, և առանց հերքելու (ինչպէս սպասեցինք) ընդհակառակ կը յարդեն և ձեռք ձեռք կարդալու կուտան, եթէ անպատասխանի մնար՝ հասարակութեան առաջը ճշմարտութեան պատիւ կ'ստանար, և լայր խաւար ու խաւար լայր կը ճանչցուէր, ուստի ազգիս պատուոյն և ճշմարտութեան անաղարտելի մնալուն համար ստիպուեցանք անոր պարունակած ստույգութիւնը Հասարակութեան առաջը ներկայացնել ամենայն անկեղծութեամբ և յայտնի ապացոյցներով:

Նախ ըստ յօդուածոյն Զատիկի պատճառաւ քաղաքիս մէջ չի հրատարակեցաւ թէ Հայ կաթողիկէ Եկեղեցին Հաստեանց պիտի յանձնուի, չի կար պատճառ մը այս հրատարակութեան: Այլ ընդհակառակն ազգայնաց կողմը յանձնուիլ հրատարակուեցաւ. վասն զի Աւար չորեքշաբթի օր Բ. Դանէն տեղոյս կուսակալին այս նպատակաւ հեռագիր եկաւ. ամեն ազգք տեսնել և անոր գործադրութեանը կը մնային, որոնք ստույգութեամբ հակառակը կը հրատարակեն:

Երկրորդ. Եկեղեցւոյն գոցուելուն պատճառ ազգայինքս եղած կը ցըրենք. և միանգամայն կը պախարակեն թէ նախկին կուսակալ Ալի բաշան զանոնք գէշ մարդ գիտէր. Սակայն Եկեղեցւոյն համար բարեխնամ Տէրութիւննիս, երկու կողմէն ալ ժամանակի յարմարութեամբ թող երթան հրամայեր է, ազգայինքս հնազանդ կը մնանք. իսկ Հաստեանց անհնազանդ կեցած՝ Տէրութեան դէմ կը պիղքեն, «ոչ, մենք միայն պէտք է երթանք», և գոցել բանալին կը պահեն. ուստի

Տէրութիւնն ալ իրաւամբ երկու զինուոր դրած կը պահպանէ. ուրեմն իւրենք են պատճառը. չէ՛ թէ ազգայինքս, Եւ քանի որ ալ նոյն կուսակալին կողմէն ըսածներուն ապացոյց մը չեն ցըցներ նոյնպէս կը ստեն. որովհետեւ ազգայինքս միշտ անոր քաղցրութիւնը ու միլիթարութիւնը վայելէր եմք:

Գ. Ինքնին ազգահամար մը կրնեք կայացնեն. յորում 1060 թիւ կաթողիկէ եղած. 320 ը այր, 340 ը կին. ամբողջէն 767 ը Հաստեան, 263 ը ազգայինք. և 28 ալ չէզոք. Եսկէ զատ 120 թիւ ալ հայազօրք խոտորչուրի կրնեք կողմնակից: Որով կուզեն ազգային կողմէնս նուազութիւնը, և իրենց բաղձալիւ ըլլալը ցուցնել:

Սակայն 1872 յունվար 30 Բ. Դրան պահանջելով իշխաւ Ալի Բաշան Հայ կաթողիկէ արքունի արձանագիրը կանխ տուաւ, մեռեալները հանելով, ծնածները արձանագրելով ամբողջին դուժարը 470 թիւ եղաւ. 236 ը Ազգային կողմը եղող, 163 ը Հաստեան. 69 ալ չէզոք ու բազակայ դատուող, որուն «մաղպաթան» կառավարութեան հաստատուելով իրկուեցաւ. Սակայն վեհապետ Տէրութիւնը իրեն արդար դատուող իւր ակնարկը ոչ ազգայնաց, և ոչ Հաստեանց բաղձալութեանը վրայ կը ձգէ, այլ ո՛րք իւր դատին մէջ արդար է, անոր վրայ կը ձգէ. եթէ ճշմարիտ իրաւունքը չաւանդէ՝ զայն անկէ առնելով քիչօրին չի տար. նոյնպէս ալ եթէ քիչօրին է, զայն զրկելով անոր շատօրին չի տար. քանի որ արդար օրէնքը աս է. թէ և իրենք բաղձալիւ ալ ըլլան ունայն յուսով վեհապետ Տէրութեան ակնարկը իրենց անիրաւ բաղձութեանը վրայ կը հրաւիրեն:

Գ. Զարմանք է այս ստույգութիւնն ալ, զի բաւական ժամանակ է որ իրենց եպիսկոպոսին հետ այս երեք բնիկ քահանայք ունին օրոնք են Տ. Պ. Սարմարեան. Տ. Յ. Ղազարոսեան. Տ. Պ. Խանպէկեան. սնապարծութեամբ հինգ քահանայ ունեցած կը հրատարակեն, և ասոնցմով Հռովմայ կրօնից, և վեհապետ Տէրութեան ամենահաւատարիմ ըլլալուն կը պարծին, որ ի՞նչ աստիճանի եղածը, Թ. պատասխանուց մէջ ինքնին պարզուած կը տեսնուի. (Ի՞նչ անիրաւութիւն որ Ազգային պարտքերը զլրովին կուրանան, ու կը համարձակին զիրենք «Հայ կաթողիկէ» անուանել.)

Եւ քաղաքական կառավարութեան ժողովոյ անդամը ներկայիս իրենցմէ գտնուած ըլլալով կը ստեն թէ միշտ

իրենցմէ կառուին, և թէ ազգիս «միլիթարները» իրենց կողմը կը գտնուին. Որուն ճշմարտը այս է. որովհետեւ «մուրախխասութիւնը, իրենց կողմը եղած ատենը» իրենց ուզածը ներկայացուցեր, և ըստ այնմ հաստատ կը մնան սակայն ազգային կողմը անցնելէն ետքը՝ չորս ամիս առաջ «Պէլէտիէի» ժողովոյն անդամը ազգային կողմէնէ առնուեցաւ, և գիտեն իրենք որ ուրիշ ժողովներու համար ալ արժանաւորներ ունինք, և ժամանակին կը տեսնան թող ազգային կողմէնէ այն նշանաւոր երեք երբաբը, որ քաղաքիս մէջ առաջին կարգի «միլիթարներն են», և Տէրութեան ծանօթ:

Զ. Նաեւ չեն սոսկար այս մեծ ստույգութեան ալ ընել, զիրենք ամենքն ալ վեհապետ Տէրութեան հպատակ. իսկ ազգայնաց կէսը օտար տէրութեան հպատակ կը հրատարակեն. Եւ չեն խղճեր ըսելու թէ «զամիր վէ վիճտան տէտիքէր շէյ պուճարտաւ ասլա եօգ» Սէտան՝ վնասուած գտնելով, նոյն թերթին մէջ «Շարք հերեւտիկոյարը Տէվլէթ վէ միլիթէ իւր յանէթի» վերնագրով յօդուածը կը հրէսէ «ալ Պոլսոյ ազգայինքը թողունք, և ըսելով Տրապիզոնի եղածները ձեռք կ'առնէ «Թրապիզոն Գալթիլի» լէրինի ալթ իւսթ իտիպ գէլլ ու զալէ սէպէ պ օլան մահալը մէղպուրտէ Շարքը հերեւտիկոյարը թահթը միւլթալայա յալըրադ 260 նուֆուստան (հինգը կը կլէ) իպարէթ օլտուգլարը հալտէ, նըսֆը, էճնէպիլ թէպալիէ. թինէ տախիլ տիրէր» եւ այլն. Ահա Լասիկ աշխատէ յայտնի ստույգութիւն մը որ միայն իրապէս «զամիր ու վիճտան» չունեցողը կրնայ ընել. Ամօթ որ մէկ եպիսկոպոս, հինգ քահանայ և 763 թիւ ժողովուրդ մը կ'ընեն:

Որովհետեւ Հայ կաթողիկէ ժողովուրդէն օտար տէրութեան հպատակ միայն 13 թիւ անձինք գիտենք, որուն 3 թիւը իրենց ծանօթ եղած չէզոքներն են, և 3 թիւն ալ իրենց կողմը կ'ընդունին, և ազգային կողմէնէ համար կը գտնուին 7 թիւ անձինք. և այն կաթողիկէները 263 թուոյն կէսը հրատարակելով 18 անգամ առաւելութեամբ կը ստեն յետոյ ճշմարտութիւնը խտուր կը պահանջէ ըստ այնմ միլիթար ըզրետին նաքարակիտը հատուցանել. պէտք է ուրեմն յանուանել եղածը նշանակելով լրացնեն, եթէ չեն ընել Սէտան իւր յօդուածը իւր ձեռքը վիզը կանցնէ, և այն կաթողիկէներն ալ մեզ համար «զամիր վէ

վիճտան տէտիքէրի պուճարտաւ ասլա եօգ տուր» ըսածները իրենց վրայ կը հաստատեն. Եւ ի՞նչպէս իրենց մէջ եղած այն նշանաւոր անձը չեն յիշեր, որ Ալթաղգիլ իրենց պարագլուխը ճանչցեր զիրենք անոր մահանուելով «Ֆիլանճանըն գօլու» կանուանեն, որ իւր հինգ թուովը իրեն հպատակ Տէրութեան «նուֆուսի տէֆթիլին» մէջ արձանագրուած չէ, իրաւ չէ՝ ասոնց վրայ գծնադուկս մղեն և զուգոյս կրանեն. Թող իրաւախօսը դատեն:

Է. Քիչուր ցըցուցած ազգայիններէս իբր «միհն ու մէշագաթ» քաչեր գտնուող կրնեն թէ հաւաք տէյիլ տիր» Հայ այնպիսի օրէնք մը որ շատուր թողտուութիւն ընէ և քիչերուն զրկանք ընել. Ինչպէս իրենք կուզեն ընել, այսինքն ազգային Եկեղեցին, կալուածք, հատոյթ և այլն ամենքը յաւիրչալակել, ու զանոնք մօրէ մըրկ ձըգել. Ուրեմն ասոնց համար քաջած «միհն ու մէշագաթ» ներուն գտնուող ընելու իրաւունք չունին. Զմեհաւատար որ Աստուծոյ ձեռքը վեհ. Թագաւորներուս սրտին վրայ է. որ ամեն կերպով զիրենք կը խնամէ. Բայց միանգամայն արդար, և հայր հասարակաց է. չի կրնար ներել որ իրենց բաղձանաց ամեն անիրաւութիւնը ընեն:

Սակայն երբ իրենք իրենց կամքը կը յարդեն՝ կամովին զիրենք գաղթական Լազերուն և Գուսթիներուն ընկեր կընեն. որուն համար ունեցած յոյսերուն ինչպէս իրենք, նոյնպէս ալ մենք կը յուսինք. Ի՞նչ դատողութիւն որ զրկեալը քիչ համարելով անոր ցաւոյն և խեղճութեանցը քարի պէս անըզայ կըլլան. և իրենց «մէշագաթ» էն գտնուող կրնեն. և իբր իրենց մէշագաթը քաղաքիս վրայ այնքան ազդեցութիւն ունի եղեր, որուն վրայ առեւտրոց պակասութեան խեղճութիւնն ալ աւելցնելով բոլոր «Պէլէտիէն» բնակիչը կը ճգմուին, եղեր. Ասկայ եթէ ստոյգ է պատճառը Տէրութեան իրենց անհնազանդութիւնը ըլլալով ազգիկ թող մտածեն որ պատասխանատու իրենք կը մնան:

Բ. Անհիմն վատահոլութեամբ մը կը սեն. Եթէ Եկեղեցին իրենց յանձնուի ազգայնոց շատերը, և չէզոքները իրենց դառնալու ապահովութիւնը կուտան, սակայն պատճառ չ'են ցուցնել. որով ստույգութեան զատ ուրիշ պատիւ չունի. Սակայն իրաւացի ապահովութիւն Ազգայինքս կրնանք տալ. որովհետեւ այսքան ժամանակ Եկեղեցին Հաստեանց ձեռքը կը գտնուէր:

